ՆՈՐ ՍԵՊԱԳԻՐ ԱՅԲՈՒԲԵ՞Ն
(Կարմիր բերդի առեղծվածային սեպագիր արձանագրության շուրջ)

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Համաշխարհային քաղաքակրթության գլխավոր բնօրրաններից մեկի՝ Առաջավոր Ասիայի մասը կազմելով, Հայաստանն արդեն տվել և դեռևս կարող է տալ բազմաթիվ անակնկալներ՝ կապված հնագույն քաղաքակրթությունների ուսումնասիրության հետ: Այդպիսի մի իրադարձություն կարող է դառնալ Հայաստանի նախաուրարտական ժամանակաշրջանի կիկլոպյան ամրոցներից մեկից հայտնաբերված առեղծվածային սեպագիր մի արձանագրության վերծանությունը, որն իր հետ կարող է փոփոխություններ բերել Հին Աշխարհի պատմությանը վերաբերող մեր գիտելիքներում:

Երևանից Եղվարդ տանող ճանապարհին, Զովունի գյուղի մոտակայքում, Հրազդան գետի աջ ափին պահպանվել են կիկլոպյան ամրոցի մնացորդներ՝ մի քանի հարյուր դամբարաններից բաղկացած դամբարանադաշտով, որից ներքև, Հրազդանի կիրճին հակված հրվանդանի վրա պահպանվել է վաղ միջնադարյան կիսավեր մի ամրոց, ինչը վկայում է, որ հնավայրում կյանքը հարատևել է նաև այդ ժամանակաշրջանում: Դամբարանադաշտի ուսումնասիրությունը սկսվել է դեռևս 1896 թվականից, երբ Պ. Զարկովսկու կողմից պեղվեց 22 դամբարան: Հնավայրում 1903 թվին պեղումներ են կատարել Մ. Զաքարյանը, իսկ 1904-ից՝ Է. Ռյոսլերը, որն ուսումնասիրել է նաև իր նախորդի պեղած նյութերը: Խորհրդային իշխանության տարիներին Կարմիր բերդում պեղումներ են իրականացրել Բ. Պիոտրովսկին (1934 թ.), Հ. Մարտիրոսյանը (1962 թ.) և Ս. Եսայանը (1965-1967 թթ.): Մինչև 1960 թ. պեղված նյութերի և դրանց վերաբերյալ արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությամբ զբաղվել է Կ. Կուշնարյովան: Հնավայրի մի քանի հարյուր դամբարաններից հայտնաբերված նյութերը (խեցեղեն, մետաղյա զենքեր, պերճանքի առարկաներ և այլն) թվագրվում են միջին, ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններով (մ.թ.ա. XXIV–IX–VIII դարեր): Կիկլոպյան ամրոցը թվագրվում է վաղ երկաթի դարով (մ.թ.ա. XII–IX–VIII դարեր)[1]:

Ամրոցի պատմական անունը, ցավոք, չի պահպանվել: Ժողովրդի մեջ այն հայտնի է Կարմիր բերդ անվամբ: Հնագիտական գրականության մեջ

---

1 Հնավայրի և կիկլոպյան ամրոցի ուսումնասիրության մասին մանրամասն տե՛ս К. Х. К у ш н а р е в а. Тазакендский могильник в Армении. — Советская археология, 1960, N 1, с. 137—147; А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 47-56; *Ա. Փ ի լ ի պ ո ս յ ա ն. Կարմիր բերդ. Հայկական սովետական հանրագիտարան. հ. 5, Երևան, 1979, էջ 331: Ս. Ա. Ե ս ա յ ա ն. Հայաստանի հնագիտություն. հ. 1, Երևան, 1992, էջ 173-174 (նաև դրանցում հղված գրականությունը):*

դամբարանադաշտը հայտնի է մոտակա Թազաքենդ գյուղի անունով, որը ևս որևէ կապ չունի ամրոցի պատմական անվան հետ:

Սեպագիր այս արձանագրության մասին գիտական առաջին (և միակ) հրապարակումը եղել է 1976 թվականին «Պատմա-բանասիրական հանդեսում»: Երկրաբան Հայկ Ազիզյանը, ներկայացնելով համառոտ մի հաղորդում, համապատասխան մասնագետների ուշադրությունը հրավիրեց առեղծվածային սեպագիր հուշարձանին՝ որոշելու արձանագրության լեզուն և ժամանակագրությունը՝ նշելով, որ այն կրող «քարը դրված է ոչ թե վաղ միջնադարում կառուցված կրաշաղախով պատի, այլ ավելի հին՝ կիկլոպյան անշաղախ պատի շարվածքում»[2]:



ՆԿ. 1

Դժբախտաբար, հետագա տարիներին այս արձանագրությունը ուշադրության չարժանացավ: Առանց որևէ հիմնավորման՝ այն բանավոր զրույցներում պիտակվում էր «կեղծ», թերևս, միայն այն պատճառով, որ սեպագրի նման տեսակ աշխարհի ոչ մի այլ տեղում հայտնի չէր: Թե որքան անհիմն ու չարդարացված է նման մոտեցումը, կարծում ենք, կարիք էլ չկա հանգամանորեն բացատրելու. այդպիսի տրամաբանությամբ «կեղծ» պետք է համարվեին բոլոր գրային համակարգերի հայտնաբերված առաջին հուշարձանները:

Արձանագրությունն ուսումնասիրելու նպատակով 2000 թ. եղանք հնավայրում: Ինչպես նկարագրված էր Հ. Ազիզյանի 1976 թ. հաղորդման մեջ, արձանագրված քարը (լուսանկարը և գծանկարը տե՛ս նկ. 1) գտնվում

2 Հ. Ա զ ի զ յ ա ն. Նամակ խմբագրությանը.– «Պատմա-բանասիրական հանդես», 1976, N 3, էջ 276:

է կիկլոպյան ամրոցի մուտքի շարվածքում՝ ոչնչով չտարբերվելով մյուս քարերից (բացի արձանագրված լինելուց):

Արձանագրությունը փորագրված է գորշ տուֆե քարի վրա, որն ունի 155 սմ լայնություն, 79 սմ բարձրություն, իսկ հաստությունը տատանվում է 75-88 սմ միջև: Բաղկացած է երեք հորիզոնական տողերից, որոնցից առաջին երկուսը գրված են քարի գրեթե ողջ լայնությամբ: Երրորդ կարճ տողը (10 սեպանիշ) մեկ երկար հորիզոնական սեպագծով անջատված է վերին երկուսից՝ զբաղեցնելով քարի միայն կենտրոնական շրջանը: Առաջին տողի երկարությունը 122 սմ է, երկրորդինը՝ 131 սմ, երրորդինը՝ 30 սմ: Երեք տողերի ընդհանուր բարձրությունը 37 սմ է:

Սեպանշանները չափերով շատ ավելի մեծ են Հայաստանում լայն տարածում ունեցող (շուրջ 600 բնագիր) բիայնական (ուրարտական) սեպագիր նշաններից: Մեծ սեպանշանների երկարությունը 5-7 սմ է: Ընդ որում, արտաքին տեսքով դրանք նման են ոչ թե միջագետքյան մեխանման նշաններին, այլ բիայնական սուրանկյուն-եռանկյունու տեսք ունեցող սեպագրերին, որպիսիք առաջին անգամ հայտնի են Վանի թագավորությունում, իսկ վերջինիս անկումից հետո՝ Աքեմենյան աշխարհակալությունում:

Նկ. 2

Քարին փորագրված է ընդհանուր առմամբ 90 մեծ ու փոքր սեպանիշ: Արձանագրության ուշադիր զննումը և նշանացանկի կազմումը ցույց են տալիս, որ արձանագրված են շուրջ երկու տասնյակ նշաններ, որոնցից մի քանիսը կրկնվում են մինչև վեց անգամ (նշանացանկը տե՛ս նկ. 2): Ստույգ չենք նշում նշանների թիվը, քանի որ կան հնարավոր կոմբինացիաներ, որոնք կրկնվում են մի քանի անգամ և դժվար է ասել՝ գործ ունենք մեկ բաղադրյալ նշանի, թե մի քանի պարզ նշանների հետ (տե՛ս նշանացանկի երկրորդ մասը):

Նշանների կազմության սկզբունքը բավականին պարզ է. այդ սկզբունքի տրամաբանությամբ էլ կազմել ենք ներկայացվող նշանացանկը: Ամենաբարդ նշանը քառաբաղադրիչ է:

Արձանագրությունը փորագրելուց առաջ նախորոք տողագծում չի կատարվել, փոքր նշանները զետեղված են տողի ինչպես վերին, այնպես էլ միջին ու ստորին մասերում, իսկ որոշ նշաններ՝ տողից վեր:

Գրության ուղղությունը, դատելով հորիզոնական դիրք ունեցող երկար սեպանշանների դիրքից, ուղղված է եղել ձախից աջ, այսինքն՝ ունեցել է նույն ուղղությունը, ինչ սեպագրի բոլոր հայտնի տեսակները (այդ թվում՝ Հայկական լեռնաշխարհում կիրառված ասուրա-բաբելոնյան և բիայնական (ուրարտական) սեպագրերը):

Արձանագրության գրաբանական վերլուծությունը (գրության ուղղության, նշանների կրկնության հաճախականության, դրանց մոտավոր թվի, դիրքի, կազմության սկզբունքի և այլնի պարզաբանումը) ցույց է տալիս, որ այն լիովին համապատասխանում է գրային մտածողության համընդհանուր, այդ թվում՝ Հին Աշխարհի սեպագիր համակարգերում ընդունված օրինաչափություններին: Այսինքն՝ չկա որևէ հիմք արձանագրությունը «կեղծ» որակելու համար:

«Կեղծ» լինելու ենթադրյալ միտքն իր ուժն ավելի կորցրեց, երբ սեպագրագետ Հովհաննես Կարագյոզյանից տեղեկացանք, որ ներկայումս Հրազդան քաղաքի սահմաններում գտնվող Մաքրավանքի հուշարձանախմբի տարածքից գտնվել է նույնատիպ սեպագիր արձանագրության մի բեկոր, որը ժամանակին հայտնաբերել էր Սուրեն Շտիկյանը: Հ. Կարագյոզյանը մեզ տրամադրեց արձանագրության նույն չափերով արված մի պատճեն, որն ուղղակիորեն հիշեցնում էր քննարկվող արձանագրությունը: Բավական մեծ հեռավորության վրա նույնատեսակ երկու արձանագրությունների առկայությունը մղում է մտածելու նոր գրային համակարգի գոյության կամ գոնե նման մի համակարգ ստեղծելու փորձի մասին:

Եռատող արձանագրության մեջ շուրջ երկու տասնյակ նշանների կիրառությունը թույլ է տալիս ենթադրելու, որ գործ ունենք սեպագիր այբուբենի հետ: Մինչ օրս հայտնի են երկու սեպագիր այբուբեններ, որոնք ստացվել են բառավանկային սեպագրության պարզեցման շնորհիվ՝ ուգարիթյանը (մ.թ.ա. XIV–XIII դդ.) և աքեմենյանը (մ.թ.ա. VI–IV դդ.)[3]: Վանի թագավորության սեպագիր համակարգը ևս ստացվել է միջագետքյան սեպագրության (շուրջ 600 նշանից բաղկացած բառավանկային համակարգի) պարզեցման արդյունքում, սակայն չի հանգել այբուբենի՝ մնալով մոտ 200 նշանից բաղկացած բառավանկային համակարգ: Թե ինչու Հայաստանում հայտնաբերված սեպագիր այբուբենը չի ստացել լայն կիրառություն, գժվար է ասել:

Ո՞ր ժամանակաշրջանով կարելի է թվագրել արձանագրությունը:

Ինչպես նշվեց, դեռ մեզանից առաջ ուշադրության էր արժանացել արձանագրության կիկլոպյան ամրոցի շարվածքում գտնվելը, ինչը կողմնորոշում է մեզ դեպի մ.թ.ա. XII–IX–VIII դդ.: Վաղ միջնադարով թվագրումը քիչ հավանական է, քանի որ Հայաստանում սեպագիրը դադարում է կիրառվելուց մ.թ.ա. VII դդ., իսկ մ.թ.ա. III–II դդ. գործածվում են հունական ու արամեական, մ.թ. V դ. սկզբից հայկական այբուբենները: Սեպագիր այբուբենի ստեղծման ժամանակաշրջանի առավել հավանական թեկնածուն կիկլոպյան ամրոցի թվագրումն է: Հօգուտ այդ կարծիքի կարող է խոսել արձանագրության ամրոցի մուտքի պատի մեջ գրված լինելը, ին-

---

3 Д. Дирингер. Алфавит. М., 1963, с. 223–227, 243–245; И. Фридрих. История письма. М., 1979, с. 121-126, рис. 174, 176.

չից կարելի է ենթադրել նաև վերջինիս՝ ամրոցի հիմնադրման վկայագիր լինելը: Այդ դեպքում քննվող սեպագիր այբուբենը ժամանակագրորեն կընկնի ուգարիթյանի և աքեմենյանի միջև:

Եթե հաստատվի մեր եզրակացությունը՝ կապված ամրոցի հիմնադրման հետ, կարելի կլինի դրանից բխող այլ ենթադրություններ անել, որոնք հետագայում կարող են թե՛ հաստատվել, թե՛ մերժվել: Երկու տողերը երրորդից առանձնացված են մի երկար սեպագծով, որի տակ առկա է համառոտ մի գրություն: Կարելի է ենթադրել, որ առանձնացվածն ամրոցի անունն է: Ցավոք, մեզ հասած սկզբնաղբյուրներում (որքան մեզ հայտնի է) չի պահպանվել Կարմիր բերդի պատմական անվանումը, ինչը օգտակար կլիներ վերծանության ընթացքում: Նշենք ուշագրավ մի պահ, որը գուցեև օգնի հետագայում բացահայտումներ կատարելու: Նշանացանկի վերջում բերված հնարավոր կոմբինացիան կրկնվում է և՛ առաջին, և՛ երրորդ տողերում: Եթե ենթադրենք, որ վերջինս ամրոցի անունն է, որը կարող էր կազմվել իր հիմնադիր արքայի անունով, ապա առաջին և երրորդ տողերում կրկնվողը կարող է լինել հենց նրա անունը:

Այսքանով առայժմ սահմանափակվում են մեր նախնական դիտարկումները, որոնք ի մի բերելով կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

ա/ Հայաստանում առկա է նոր սեպագիր համակարգ, որը լիովին տարբերվում է մինչ օրս աշխարհում հայտնի սեպագիր մյուս համակարգերից,

բ/ այն, ամենայն հավանականությամբ, եղել է սեպագիր այբուբեն,

գ/ դատելով փաստերից՝ գրային համակարգը ստեղծվել է մ.թ.ա. XII–IX/VIII դդ., թեև չի բացառվում թվագրման հնարավոր այլ տարբերակ,

դ/ արձանագրությունը կարող է վերաբերել ամրոցի հիմնագրմանը, իսկ առաջին և երրորդ տողերում կրկնվող նշանախումբը հիմնագիր-արքայի անունը լինել:

Հետագա ուսումնասիրությունները կարող են հանգեցնել արձանագրության վերծանությանը, ինչը մեծ արժեք կունենա ոչ միայն հայագիտության, այլև գրաբանության համար ընդհանրապես, վեր հանելով գրային համակարգերից ամենակատարյալին՝ այբուբենին անցման առաջին փորձերից մեկը, որը կատարվել է Հայկական լեռնաշխարհում:

НОВЫЙ КЛИНООБРАЗНЫЙ АЛФАВИТ?
(О загадочной клинообразной надписи из Кармир Берда)

АРТАК МОВСИСЯН

Резюме

В статье рассматривается загадочная клинообразная надпись из Кармир Берда (по дороге Ереван – Егвард) на стене у входа в доурартскую циклопическую крепость. Предварительные итоги исследования показывают, что надпись сделана на до сих пор неизвестном науке клинообразном алфавите, который, по-видимому, был создан в XII – VIII вв . до н.э. (возможна и иная датировка).

Сделанный анализ предполагает возможность дальнейшего проведения работ с целью расшифровки надписи.

A NEW CUNEIFORM ALPHABET?
(About the mysterious cuneiform inscription from Karmir Berd)

ARTAK MOVSISYAN

S u m m a r y

The article makes a close study of the mysterious cuneiform inscription from Karmir Berd (on the road Yerevan–Yeghvard), which is inscribed on the entrance wall of the pre-Urartian Cyclopean fortress. According to the preliminary researches the inscription is written with an unknown alphabet, created most likely in the period from the 12th to the 8th century B. C. (other dates are not excluded, too). The investigation carried out in the article allows to further the researches of its deciphering.